ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594015
էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

№ 01/27.1/43617-2024
«29» հոկտեմբերի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Մեխակյան,**

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ի 086-2938 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Խոյ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

X

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

Կատարող՝ Մարիամ Սահակյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 13

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՄՈՒՏՔ 1683 30 10 24

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Խոյ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Խոյ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հավելվածի 1-ին կետի «1.1)» ենթակետի համարակալումն անհրաժեշտ է փոխարինել ամբողջական թվով, մասնավորապես, «2)» թվով և հաջորդիվ վերանայել ենթակետերի համարակալումը: Նույն դիտողությունը վերաբերում է «4.1» և «4.2» ենթակետերին՝ նկատի ունենալով, որ նոր ակտ է ընդունվում, ուստի կետերի և ենթակետերի համարակալումը պետք է լինի ամբողջական թվերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հավելվածին:

2.Նախագծի 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» պարբերության վերջին դրույթում «քսանհինգ երեսունմեկ հազար դրամ» բառերն անհրաժեշտ է վերանայել՝ հստակեցնելով տուրքի թիվը:

3. Նախագծի 1-ին հավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետում «հազար» բառը կրկնվում է:

4.Նախագծի 2-րդ հավելվածի կետերի և ենթակետերի համարակալման հաջորդականությունն անհրաժեշտ է վերանայել, մասնավորապես, 1-ին կետին հաջորդում է 7.1 կետը, իսկ 7.2-րդ կետին հաջորդում է «8)» ենթակետը, որին հաջորդում է 9-րդ կետը, 24-րդ կետը կրկնվում է և այլն: Ուստի անհրաժեշտ է վերանայել ամբողջ տեքստի համարակալումը:

5.Նախագծի 2-րդ հավելվածի 8-րդ ենթակետում և ամբողջ տեքստում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «օրենքի» բառը:

6. Նախագծի 2-րդ հավելվածի 9-րդ կետում «սույն» բառն անհրաժեշտ է փոխարինել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» բառերով:

7.Նախագծի 2-րդ հավելվածի 24-րդ կետի 2-րդ ենթակետից հետո նշված «Համայնքային տեխնիկայի ծառայություններից օգտվելու աշխատաժամանակը սահմանվում է 09:00-ից մինչև 18:00-ն:» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով, որ հիշյալ դրույթը սույն նորմատիվ իրավական ակտի կարգավորման առարկան չի հանդիանում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**